ՍԱՄՈՒԵԼ ՄՈՒՐԱՏՅԱՆԸ ԵՎ ՆՐԱ ԱՆՎԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԸ

Ռ. Գ. ԴԱՎԹՅԱՆ

Սամուել Մուրատյանը ծնվել է 1760-ին, Փոքր Ասիայի Եվդոկիա-Թոքատ հայաշատ քաղաքում։ Նրա հայրը՝ Մկրտիչ Մուրատյանը և մայրը՝ տիկին Բեկզատեն, Եվդոկիայից երկու որդիների հետ տեղափոխվում են Կ. Պոլիս, ապա մեկնում Եվրոպա։ 1773-ին նրանք հաստատվում են Հունգարիայում։ Այստեղ էր գտնվում Մխիթարյան հայկական վարժարանը, որը գործում էր Կարապետ վարդ. Մարտիրոսյանի տնօրինությամբ։ Շուտով պատանի Սամուելը դառնում է նրա աշակերտը։ Հինգ ամսվա ընթացքում նա վարդապետի մոտ սովորում է մայրենի լեզու և ստանում ազգային դաստիարակություն։

Երկու տարի հետո Կարապետ վարդապետի խորհրդով և հանձնարարական նամակով Մուրատյանների ընտանիքը տեղափոխվում է Վենետիկ, ուր գտնվում էին նրանց ազգականները։ Սամուել Մուրատյանը, մոտիկից դիտելով Մխիթարյան միաբանների ազգային գործունեությունը, համոզվում է, որ միայն Մխիթարյանները կարող են փրկել հայ մանուկներին օտարացումից և պահել ազգային ավանդույթները։ Ազգասիրական խորը զգացումներով լցված Մկրտիչ Մուրատյանը պատրաստ էր բարերարության՝ հայ մանուկների ուսուցման գործում։ Այդ նպատակով նա ընտանիքով մեկնում է Հնդկաստան, սակայն ճանապարհին հիվանդանում և մահանում է։ Սամուելը, հաղթահարելով մի շարք դժվարություններ, եղբոր հետ հասնում է Մադրաս։ Իրենց հոր բարեկամի՝ Գրիգոր Աղա Շահրմեյանի հովանավորությամբ երկու եղբայրները չորս ամիս մնում են այստեղ։ Շուտով Սամուելի եղբայր Կարապետը մեկնում է Կալկաթա՝ ծանոթ վաճառականի մոտ աշխատելու, իսկ Սամուելը մնում է Մադրասում, զբաղվում առևտրական գործերով։

Տարիների ընթացքում Սամուել Մուրատյանը հարստանում է, ձեռք բերում մեծ կարողություն և դառնում ժամանակի ազդեցիկ մարդկանցից մեկը։ Նրան մշտապես մտատանջում էր հայ երեխաների ուսման ու դաստիարակության խնդիրը։ 1790-ին Վենետիկից Մադրաս են գալիս Մխիթարյան երկու միաբաններ՝ Պողոս Մեհերեյանը և Նիկողայոս Բուղայանը՝ հայկական դպրոցի կառուցման համար հանգանակություն անելու։ Մադրասի մեծահարուստներից մեկը՝ Էդուարդ-Ռաֆայել Ղարամյանը, որ ժամանակի զարգացած և եվրոպական կրթություն ստացած մարդկանցից էր, Մխիթարյան երկու միաբաններին խոստանում է օժանդակել հայկական դպրոցի կառուցման գործում, այն պայմանով, որ Նիկողայոսը հանձն առնի իր երկու զավակներին՝ Ալեքսանդրին և Հովհաննեսին, տանել Լոնդոն և հնգամյա անգլիական ուսմանը զուգընթաց սովորեցնել նաև հայերեն։ Իսկ Պողոսը պետք է մնար Մադրասում, նրա երկու դուստրերին՝ Աննային ու Մարիամին, մայրենի լեզու սովորեցնելու։

Պողոս Մեհերեյանն իր ազնիվ բնավորությամբ և դաստիարակի գործունեությամբ դարձավ Ռաֆայել Ղարամյանի ընտանիքի մտերիմ ու հավատարիմ բարեկամը։ Նրա խորհրդով Ռաֆայելի ավագ դուստրը՝ Աննան, ամուսնանում է Սամուել Մուրատյանի հետ։ Ռաֆայելը, տեսնելով Սամուելի առևտրական ընդունակությունները, նրան դարձնում է իր ունեցվածքի գործակալն ու կտակարարը։

Դստեր ամուսնությունից հետո Ռաֆայելը մեկնում է Լոնդոն, որտեղ կարճ ժամանակ անց մահանում է։ Իմանալով անհրաժեշտ մահը, Սամուելը որո-

շում է իրագործել նրա կտակը՝ դպրոցի հիմնադրման վերաբերյալ։ Նա Մադրաս է հրավիրում Նիկողայոս Բուղայանին և հանգուցյալի ժառանգորդներին՝ խորհրդակցելու կտակի գործադրության մասին։ Սամուել Մուրատյանի ջանքերն ապարդյուն են անցնում։ Կտակը մնում է ժառանգորդների մոտ, և Սամուելը չի կարողանում գումար հատկացնել դպրոցի հիմնադրմանը։ Բայց նա Նիկողայոս վարդապետին խոստանում է՝ «Եթե Տերը յաջողություն տա իմ գործերուն, պիտի օգնեմ իմ Ազգին, և այնքան որքան ոչ ոք ըրած ըլլայ իր կենդանութեանն»[1]։

Սամուել Մուրատյանը խորապես զգում է հայ դպրոցի կարևորությունը, այն համարելով միակ միջոցը՝ ազգի փրկության համար։ Նա ցանկանում է, որ հայերը, Եվրոպայում կրթություն ստանալուց բացի, իմանան իրենց մայրենի լեզուն, պատմությունը, մշակույթը. «Հարկ է փարատել տգիտությունը, որը արմատն է պառակտումի, բանավեճերի և նույնիսկ եղբայրական ատելության։ Հասարակաց բարձրագույն վարժարանի մը գոյությունը անհրաժեշտություն կդառնա։ Հոն մանուկը պիտի զարգանա տոհմային և եվրոպական մշակույթով. առաջինով՝ ապահովելու համար մայրենի բարբառը, երկրորդով՝ պահելու միջտ քաղաքակիրթ ազգերու մոտ համազոր գերակայություն մը։ Վարժարան մը որմե ամեն ընտանիք պետք է օգտվի»[2]։ Նրա նպատակն էր Մադրասում ունենալ Մխիթարյան միաբանության մի ներկայացուցիչ, որը հայ մանուկներին կսովորեցներ հայերեն։ 1798-ին Մուրատյանը գրում է Նիկողայոս վարդապետին. «Մենք հայերս, ուսումից ու գիտությունից զուրկ լինելով, այս ու այն կողմ դրամ կշահենք, շփվելով ուրիշ ազգերի հետ՝ մեծ հարստության ուժով գիտունների մեջ կգտնվենք, սակայն այդ շփումը մատաղ հասակում չի կատարվում և դրա համար բավականաչափ կատարյալ չենք դառնա»[3]։ Նա նշում է, որ կգտնվեն ուրիշ հայ հարուստներ, որոնք ևս կզգան հայ դպրոցի «քաղցրությունը» և կհետևեն իր օրինակին։ Այդպիսով «կարելի պիտի լինի հայ ազգի մեջ, եթե ոչ ամբողջապես, ապա մասամբ, գիտության և իմաստության լույս սփռել, որ մեր անտեր ազգը արթնանա թմրության քնից և անհոգությունից»[4]։

Սամուել Մուրատյանը, հաշվի առնելով Մխիթարյան հայրերի ազգանվեր գործունեությունը, որոշում է մեծ գումար հատկացնել, որպեսզի Եվրոպայի կենտրոնում միաբանությունը հիմնի կրթական նոր օջախ։ Մահից մեկ տարի առաջ նա գրում է իր կտակ-պատվիրանը՝ մեծ հարստություն թողնելով հայ դպրոցի հիմնադրման գործին։ Նա ցանկություն է հայտնում կտակն իրագործել անգլիական օրենքի համաձայն և միևնույն ժամանակ հորդորում է իր զավակներին, «որ վեճեր չհարուցանեն, այլ, եթե անժառանգ մեռնեն, բաժին հանեն և կամ իրենց ունեցածին 5 առ 100-ը տան»[5]։ Սամուել Մուրատյանը դժբախտաբար չտեսավ իր վարժարանը։ Անխոնջ հայրենասերը մահացավ 56 տարեկան հասակում, 1816-ի ապրիլի 20-ին։

Նրա մահից 16 տարի հետո, հաղթահարելով մի շարք դժվարություններ, Մխիթարյան Սարգիս Թեոդորյանը անգլիական դատարանի միջոցով ապահովեց կտակով նախատեսված դրամի վերադարձը։ Կտակում հեղինակը պատվիրում է, որ «Վենետիկի հայ միաբաններուն խորհուրդով և միջնորդությամբ հող գնեն Եվրոպայի որ կողմը որ հարմար կդատեն անոնք, և կառուցանեն դպրատուն մը հայազգի մանուկներու դաստիարակության»[6]։

Սամուել Մուրատյանի թողած հասույթով Մխիթարյան միաբանությունը հայազգի մանուկների ուսուցման և դաստիարակության համար Պադուայում

---

1 Մուրատեան վարժարան, Ս. Ղազար, Վենետիկ, 1975, էջ 7։
2 Նույն տեղում։
3 Նույն տեղում։
4 Նույն տեղում։
5 Նույն տեղում։
6 Նույն տեղում, էջ 8։

(Իտալիա), որը եվրոպական կրթական նշանավոր կենտրոններից էր, հիմնադրեց դպրատուն։ 1833-ի հուլիսի 18-ին Սուքիաս Սոմալյան աբբահայրը դիմեց իշխանությանը՝ վարժարանի արտոնություն ստանալու համար։ Վարժարանի ստեղծման և կառուցման համար տրվեց հետևյալ արտոնագիրը.

«Առ Արհիապատիւ Գերպ. Սուքիաս Արքպս. Սոմալ
Ընդհանրական Աբբահայր
Մխիթարեան Հարց Հայոց Ս. Ղազարու ի Վենետիկ

Մինչև Ձերդ Արհիապատիւ գերապայծառութեան ընթացիկ ամսոյս 10 թուակիր պատուական գրութենէն կը տեղեկանանք Պատովայի մեջ հայկական Ազգային Վարժարանի մը իրագործման մասին, որ պիտի նկատուի մասնաճիւղ մը կամ յարակից դպրոց մը Ս. Ղազարի Ձեր Մենաստանին, ըստ կարգագրութեան հանգուցեալ Սամուէլ-Մուրատի կտակին, կը հայցենք որ Ձերդ Արհիապատուութիւնը բարեհաճի ատենին հաղորդել խնդրոյ առարկայ դպրոցին կառուցումը, որուն հաստատութիւնը այժմէն իսկ կը յայտարարուի այսու[7]։

Վենետիկ, 18 յուլիս 1833 ՍՓԱՌԻՐ»։

Բացումից երկու օր հետո Ս. Սոմալյանը հաղորդում է Սամուել Մուրատյան վարժարանի պաշտոնական բացման մասին.

«Վսեմափայլ Տէր,

Գոհացում տալու համար Ձերդ Վսեմութեան, 12 Յուլիս 1833, թիւ 26690—3279 պատուական նամակով յայտնած փափաքին, թէ հաղորդեմ Ձեզի հայ Վարժարանին հիմնարկութիւնը։

Ահաւասիկ Ձերդ Վսեմութեան ցոյց տուած հոգածութեան հանդէպ շնորհակալութիւնս յայտնելու ատեն, պատիւ ունիմ տեղեկացնելու Ձեզի, որ ներկայ տարուան սեպտեմբերի 4-ին բացուեցաւ վարժարանս միեւնոյն կանոնսերով եւ միեւնոյն կարգապահութեամբ մենաստանիս, որուն մէկ օժանդակ Տունն է։

Վստահ եմ որ Ձեր Վսեմութիւնը միաբանութեանս շնորհած պաշտպանութիւնը ազնուօրէն պիտի տարածուի նաեւ այս վարժարանիս վրայ։

Պատիւ ունիմ ինքզինքս յայտարարելու
Ձեր Վսեմութեան Ամենախոնարհ եւ անձնուէր ծառայ
Սուքիաս Սոմալեան

6 Սեպտ. 1833

Արքպս. եւ ընդհ. Աբբայ»[8]։

Եվ այսպես, 1834 թ. ստեղծվեց Սամուել Մուրատյան վարժարանը, որը դարձավ հայ կրթության առաջին օրրանը Պադուայում։

Նորաստեղծ վարժարանում առաջին հերթին սովորելու էին մեկնում Կ. Պոլսի հայ երեխաները։ Եվրոպայի տարբեր երկրների մամուլը լայնորեն լուսաբանում է վարժարանի գործունեությունը, որի առաջին շրջանը տևեց մինչև 1846 թ.։

Այդ ընթացքում տարբեր հայաբնակ վայրերից այստեղ ուսանելու էին գալիս հարյուրավոր հայ երեխաներ։ Վարժարանն արագընթաց ծաղկում ապրեց։ Ունենալով լիարժեք անկախություն, նրա ղեկավարությունը ցանկանում էր վարժարանի հիման վրա ստեղծել հայկական համալսարան։ Սակայն Հովհաննես Մուրատյանը և Ալեքսանդր Ղարամյանը, փոխանակ ուրախանալու իրենց ծնողների նվիրական կամքը կատարվելու և նրանց թողած կտակի շնորհիվ այդ վարժարանի՝ Եվրոպայում բարգավաճելու համար, փորձեցին այն հանձնել ավստրիական իշխանությունների տնօրինությանը, միշտ նրանց հսկողության տակ գտնվելու պայմանով։ Վարժարանը Իտալիայում պահելու միաբանության ձեռնարկած բոլոր միջոցներն ու ջանքերն ապարդյուն անցան։ Տեսնելով, որ այլևս ամեն խնդրանք և պատճա-

7 Վենետիկ, Ս. Ղազարի գրադարան։
8 Նույն տեղում։

ռաբանություն անօգուտ է, և վարժարանն իր ներքին անկախությունը վտանգի կենթարկի, Սոմալյանը կատարեց մի վճռական քայլ։ Հավաքեց միաբանության բոլոր անդամներին և խորհրդակցելով նրանց հետ, եկավ մի համաձայնության, որ վարժարանը պետք է փոխադրել Ֆրանսիա։ Ֆրանսիան հնուց ի վեր համակրանք էր տածում հայերի հանդեպ և 1846 թ. իր դռները բացեց հայոց վարժարանի առջև։

Մխիթարյան միաբանության պատվիրակները Փարիզ մեկնելով, իրենց հետ տարան աբբահոր խնդրագիրը՝ ուղղված Ֆրանսիայի արտաքին գործերի նախարարին։ Պատվիրակ հայերը համոզվեցին, որ քաղաքակիրթ աշխարհը պահպանել է իր դարավոր համակրանքը թե հայերի, և թե Մխիթարյան միաբանության նկատմամբ։ Եվ Ս. Թեոդորյանը աբբահորը գրեց. «Անոնք ոչ միայն շատ դիւրին կը համարին մտադրուած ձեռնարկը, այլ եւ փառք կը համարին իրենց աշխարհին համար ունենալ հայկական լուսաւորութեան կեդրոն մը իրենց մայրաքաղաքին մեջ, նկատելով, որ այդ ազգը շատ պատուական է իրենց աչքին, մանաւանդ, որ այդ բանը պիտի կատարուի միաբանութեան մը ձեռքով, զոր կը համարին հասած ըլլալ քաղաքակրթութեան եւ գիտութեան ծայրը, ըլլալով միութեան միջնորդ Արեւմուտքի եւ Արեւելքի միջեւ. առաջինը՝ որ գիտութեան լոյս տարածեց երկրորդին մեջ իր ազգակիցներուն մօտ»[9]։

Ֆրանսիայի արտաքին գործերի նախարար Ֆրանսուա Կիզոն, ուսումնասիրելով հայերի խնդրագիրը, 1845-ի մայիսի 19-ին դրական և նպաստավոր պատասխան է տալիս[10]։

Լիազոր պատվիրակները, որպեսզի հաստատուն հիմքերի վրա դնեին վարժարանի ինքնակառավարումը, 1846-ի մարտի 26-ին մի նոր խնդրագիր են ներկայացնում Կիզոյին, որի մեջ ասվում է. «Ձեր հաւանութիւնը ստանալէ յետոյ, Ազնուամեծար նախարար, ստորագրեալներս, հոս Փարիզի մէջ պանդոկ մը գնեցին, 12, Rue Monsieur։ Հիմա վերջնական պատրաստութիւնները կը տեսնենք ընդունելու համար մեծ թիւով հայ մանուկները համախմբուած Կ. Պոլիսէն, Եւրոպայէն, Թուրքիայէն, Ասիայէն, Պարսկաստանէն, Սիրիայէն եւ Եգիպտոսէն։

Այս կացութեան մեջ—ստորագրեալներս, որպեսզի կարենան, իրենց հաստատութեան նախօրեակին, անոր տալ վերջնական կազմը, կը դիմեն ձեր բարձր բարեացակամութեան, խնդրելով ձեզմէ, որ փութացնէ նորին Տէրութեան բարութիւնը, որպէսզի բարեհաճի վերահաստատել արքունական հրովարտակով մը այդ արտօնութիւնները՝ որ Ազնուամեծար նախարարդ արտօնած է արդէն իր 19 մայիս, 1845 թուղթով»[11]։

Կիզոյի պատասխան նամակի հետ պատվիրակ հայերը ստանում են նաև Լուի Ֆիլիպի ներքոհիշյալ հրովարտակը, որը վերահաստատում էր Սամուել Մուրատյան վարժարանի ոչ միայն հիմնադրումը, նրա մատակարարական և վարչական անկախությունը, այլև այն իր պաշտպանության տակ վերցնելու հանգամանքը։

ԹԱԳԱՒՈՐԱԿԱՆ ԱՐՏՕՆԱԳԻՐ
ՎԱՐԺԱՐԱՆԸ ՓԱՐԻԶ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ

ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԿՐԹՈՒԹԵԱՆ

Նեոյիի Պալատ, 11 Յունիս 1846

ԼՈՒԻ ՖԻԼԻՓ

Թագաւոր Ֆրանսացիներու
Բոլոր ներկաներուն և գալիքներուն ողջոյն.

---

9 Մուրատեան վարժարան, Ս. Ղազար, էջ 7։

10 Ֆրանսուա Կիզոյի արտոնագիրը՝ վարժարանը Փարիզ փոխադրելու մասին, պահպանվում է Վենետիկի Մխիթարյանների գրադարանում և Փարիզի Նուպարյան մատենադարանում։ 1936-ի օգոստոս-դեկտեմբեր ամիսներին այն տպագրվել է «Բազմավէպում»։

11 Մուրատեան վարժարան, էջ 20։

Տեսնելով Տէր Սարգսի և Սորկուճի՝ Վենետկոյ Մխիթարեաններու Հայկական ճեմարանին պատուիրակներուն ձեռքով ներկայացուած աղերսագիրը, որով արտօնութիւն կը խնդրէին Բարիզ փոխադրելու՝ Սամուէլ Մուրատեան Հայ Վարժարան անուանակոչութեամբ սոյն ճեմարանէն Փատուա հաստատուած Վարժարանը և զայն դնելու միմիայն Վենետկոյ Մխիթարեաններու Մեծաւորին իշխանութեան և իրաւասութեան տակ.

Հրամայեցինք և կը հրամայենք հետեւեալները

Յօդուած Ա.

Վենետկոյ Մխիթարեաններու Հայկական ճեմարանի խնամքով և ծախքով, Սամուէլ Մուրատեան Հայ Վարժարան անուանակոչութեամբ, Հայ Կաթողիկէ Վարժարանի մը հիմնարկութիւնը Բարիզի մէջ վաւերացուած է։

Յօդուած Բ.

Այս Վարժարանը զետեղուած է Ֆրանսական Կառավարութեան մասնաւոր պաշտպանութեան տակ։ Սահմանուած է իբր հաստատութիւն մը հասարակաց օգտի օտարներու համար, և բոլորովին ազատ է ուսման, կարգապահութեան ինչպես նաեւ մատակարարութեան տեսակէտով։

Յօդուած Գ.

Միայն հայազգի աշակերտներ կրնան ընդունուիլ, որոնք նշանակուած պիտի ըլլան Վենետկոյ Մխիթարեաններու Մեծաւորէն կամ անոր պատուիրակէն։

Յօդուած Դ.

Բովանդակ Հաստատութեան մատակարարական իշխանութիւնը, Վարչութիւնը և հսկողութիւնը կը պատկանի Վենետկոյ Մխիթարեաններու Մեծաւորի պատուիրակին։ Այս պատուիրակը Սամուէլ Մուրատեան Վարժարանին Տեսուչ տիտղոսը կ'առնէ։

Յօդուած Ե.

Հասարակաց կրթութեան բաժնին մեր Պետական Քարտուղար Նախարարին յանձնուած է ներկայ Հրովարտակին գործադրութիւնը։

Տրուած Նեոյիի պալատէն, 11 Յունիս 1846

Թագաւորին հրամանով
Պետական Քարտուղար Նախարար
հանրային կրթութեան բաժնի
ՍԱԼՎԱՆՏԻ

ԼՈՒԻ ՖԻԼԻՓ
Պատճէնի հաւատարմութեան համար
Աղերսագիրներու պաշտօնեայ
Գլուխ Քարտուղարութեան
ՌՈՎԱՍՈՆ[12]

Մուրատյան վարժարանի համար հատկացվում է Կոնդե իշխանի պալատը՝ հարյուր սենյակներով և ընդարձակ պարտեզով։ 1846-ի մարտի 31-ին, Հովհ. վարդ. Սորկուճյանը աբբահորը գրում է. «Հաւատալս չի դար եւ երազ կը թուի ինձ՝ երբ կը խորհիմ որ Ֆրանսա ազգային վարժարան մը կը հաստատուի մեր ձեռքով. այնպէս որպէս թե մեր նախնիքը Աթէնքի դպրոց բանային հայերուն տալու համար ամեն տեսակ գիտութիւն եւ քաղաքականութիւն»[13]։

1846-ի սեպտեմբերի 27-ին Ստեփան վրդ. Գարեգյանի առաջնորդությամբ Կ. Պոլսից Փարիզ է փոխադրվում հայ մանուկների առաջին խումբը՝ բաղկացած 37 հոգուց։

Միաբանության նորընտիր աբբահայրը՝ Գ. վրդ. Հյուրմյուզյանը, Հռոմից Վենետիկ է վերադառնում Սյունյաց արքեպիսկոպոս օծված և մեկնում է Փարիզ՝ նախագահելու վարժարանի բացման հանդեսը։ 1846-ի հոկտեմբերին

12 Նույն տեղում, էջ 22։

13 Փարիզ, Նուպարյան մատենադարան, Սամուել Մուրատյան վարժարանի ֆոնդ։

եկեղեցական և հասարակական գործիչների ներկայությամբ կատարվում է վարժարանի բացումը։ Իսկ պաշտոնական բացումը տեղի է ունենում 1848-ի սեպտեմբերի 24-ին, Ֆրանսիայի արտաքին գործերի նախարար Ալֆոնս Դը Լամարթինի նախագահությամբ։ Աբբահայրն իր ճառում բարձր է գնահատում ֆրանսիացիների և հայերի բարեկամական կապերը։ Նա հույս է հայտնում, որ գալիք սերունդները նույնպես կշարունակեն կրթական այդ ազնիվ և բարի գործը։

Լուի Ֆիլիպը, իր համակրանքը հայ ազգին և Մխիթարյան միաբանությանը ցույց տալու համար, աբբահորը պարգևատրում է Պատվո լեգեոնի շքանշանով։

Այսպիսով, Մուրատյան վարժարանը սկսում է իր գործունեության երկրորդ շրջանը Փարիզում՝ իր վրա գրավելով երկրի մտավորականների և քաղաքական գործիչների ուշադրությունը։ Ազգային պարտություն ապրելով, Հովհաննես Տատյանն իր երկու զավակներին Վենետիկից բերում է Փարիզ և մեկ շաբաթ այնտեղ մնալով, գրում է. «Քանի մը օրէ ի վեր Փարիզ հասանք։ Մեծ եղաւ ուրախութիւնս՝ տեսնելով աչքերովս Մխիթարի աշակերտներուն անխոնջ աշխատանքը. Փարիզի մեջ փառաւոր ազգային վարժարան մը գոյութիւն ունի. ոչ միայն շէնքը շքեղ է, այլ դասաւանդութիւնը, կարգաւորութիւնը, հայերու հոգածութիւնը։ Հպարտ եմ ո՛չ միայն նուաստս, այլ եւ ազգայիններ՝ որոնց պարծանքն է մանկութեան այս օրրանը»[14]։

Ս. Մուրատյան վարժարանը աշակերտներ է ընդունում Մերձավոր ու Միջին Արևելքի և մյուս երկրների հայկական նախակրթարաններից։ Այստեղ ուսուցման տևողությունը 5—6 տարի էր, որից հետո աշակերտները կարող էին ընդունվել բարձրագույն ուսումնական հաստատություններ։ Ուսումնարանում դասավանդվող առարկաներն էին՝ բարոյագիտություն, հայերեն, ֆրանսերեն, անգլերեն, թուրքերեն, իրավագիտություն, վաճառականություն, փիլիսոփայություն, ճարտարապետություն, վիմագրություն, քաղաքական տնտեսություն, մեքենականություն, աշխարհագրություն, պատմություն, հաշվետոմար, նկարչություն, երաժշտություն, երգ, մարզանք։ Վարժարանի տեսուչներ են եղել ժամանակի նշանավոր մանկավարժ-հայագետներ Սարգիս Թեոդորյանը (1846—1855), Ռաֆայել Թրյանցը (1855—1858), Ղևոնդ Ալիշանը (1858—1861), Օքսենտիոս Գուրգենյանը (1861—1865), Հմայակ Պապիկյանը (1865—1870) և ուրիշներ։ Երկար տարիներ ուսումնարանում բարոյագիտություն, փիլիսոփայություն և հայրենի գրականություն է դասավանդել Գաբրիել Այվազովսկին։ Այստեղ դասավանդել են նաև ֆրանսիացի փաստաբան դը Ֆրենը, ճարտարապետ Կարտեսը, Պոնտենը, Ժաք-Էնտին։

Իր գործունեության երկրորդ շրջանում Մուրատյան վարժարանի կատարած դերը ազգային և հայագիտական իմաստով շատ մեծ է։ Այդ մասին են վկայում նրա հարյուրավոր շրջանավարտները, որոնք դարձան ժամանակի նշանավոր մարդիկ, ինչպես՝ օրինակ. Մ. Մամուրյան, Կ. Գարագաշ, Մ. Աղարեկյան, Ա. Չրաքյան, Հ. Չամչյան, Ա. Տեր-Դավթյան, Ն. Գալֆայան, Գ. Ինճիճյան և ուրիշներ։

1870-ի ֆրանս-պրուսական պատերազմը փակեց վարժարանի դռները, և աշակերտները փոխադրվեցին Վենետիկ, ուսումը շարունակելու Ռաֆայելյան վարժարանում։ Ազգային լուսավորության այս կենտրոնը, 25 տարիների բեղմնավոր գործունեությունից հետո, 1870-ին ժամանակավորապես թողեց Փարիզը և միացավ Վենետիկի վարժարանին՝ կոչվելով Մուրատ-Ռաֆայելյան վարժարան։

Քաղաքական իրադրության փոփոխումից և շուրջ 60 տարվա ընդմիջումից հետո ֆրանսիական կառավարությունը կրկին տվեց իր համաձայնությունը՝ Փարիզում վերահաստատել Սամուել Մուրատյան վարժարանը։ 1928-ի

---

14 Նույն տեղում։

օգոստոսի 27-ին Մխիթարյան միաբանությունը Փարիզ է ուղարկում հայկական պատվիրակություն, որը վարժարանի նախկին աշակերտներ Գ. Նորատունկյանի, Գ. Սինապյանի, Ա. Զոպանյանի, Ա. Խատիսյանի և Օ. Հեքիմյանի հետ զբաղվում էր վարժարանի վերաբացման աշխատանքներով։ Երկար որոնումներից հետո, Փարիզի Սեր արվարձանում գտնվող մարկիզուհի Պոմպադուրի պատմական քառահարկ դղյակում, 1928-ի դեկտեմբերի 23-ին, ոչ պաշտոնական, վերաբացվեց հայ մանուկների լուսավորության օրրանը՝ Սամուել Մուրատյան վարժարանը։ Վարժարանի հանդիսավոր բացումը տեղի ունեցավ 1930-ի հունիսի 8-ին։ Ֆրանսիայի քաղաքական գործիչներն ու մտավորականությունը մասնակցեցին մեծաշուք արարողությանը։ Հանդեսը նախագահում էր վարչապետ Ժորժ Լեյկը։ Բացման արարողությանը մասնակցում էին հայ մտավորականներ Ա. Ահարոնյանը, Ա. Խատիսյանը, Գ. Նորատունկյանը, Գ. Սինապյանը, Ա. Զոպանյանը, Մուրատ-Ռաֆայելյան վարժարանի նախկին սաներ։ Բոլորը հոտնկայս ունկնդրում են «Մարսելյոզը» և ազգային «Բամ-Փորոտան» քայլերգը։ Ժ. Լեյկի բացման խոսքից հետո, Մուրատյան վարժարանի պատմության մասին հակիրճ խոսք է ասում Զ. Խանզատյանը։ Այնուհետև ելույթ է ունենում Ֆրանսիայի պառլամենտի երեսփոխան Հանրի Լորենը. «Իրաւ է, որ 60 տարիներ յետոյ Մխիթարյան միաբանութիւնը իր յանձնառութիւնը կը կատարէ, բայց պէտք է նկատել, որ իտալական վարչութեան ներքեւ շատ հանգիստ էին, եւ ամենալայն ասպրնջականութիւնը կը վայելէին։ Լատին ժողովուրդները ազգասէր են, եւ դիտեն գնահատել ու քաջալերել ուսման եւ քաղաքակրթութեան համար աշխատողները։ Բայց միաբանութիւնը յանձնառութիւն մ՚ունէր եւ պէտք էր զայն կատարել. ահա այսօր կը կատարէ։ Մենք ուրախ ենք հիւրընկալելու մեր մէջ լոյսի այս վառարանը, ու պիտի ընենք բոլոր կարելին՝ հայ Ազգին օգտակար դարձնելու զայն. որովհետև չենք կրնար մոռանալ Հայաստանի եւ Ֆրանսայի իրարու հանդէպ տածած վստահութիւնը եւ սերը։ Ազատ էք այս երկրին մէջ զարգանալու»[15]։ Ֆրանսիական կառավարության անունից հայ ժողովրդի մասին իր խոսքն է ասում Ժ. Լեյկը. «Այսօր կառավարութիւնը, նախարարութիւնը, խորհրդարանը, Ակադեմիան և գիտութեան կաճառը ներկայացուցած են հոս, խնդակցելու եւ քաջալերելու համար ձեզ։ Այս ազգը կը ճանչնամ պատերազմէն առաջ, ճանչցայ զայն պատերազմի միջոցին, պատերազմէն վերջ։ Բայց թոյլ տուէք որ հարցնեմ ձեզի. ո՞վ էք դուք եւ ո՞ւր տեղէն կու գաք։ Ո՞ւր են ձեր ժամանակակից ազգեր, Քաղդէացիք, Ասորեստանցիք... Անոնք անյայտացան, իսկ դուք, հակառակ ձեր դարերու տառապանքներուն, տակաւին ամէն օր կը ձգտեք բարձրանալու քաղաքակրթութեան ճամբուն մէջ։ Ի՞նչպէս կրնանք չսիրել ձեզ, չգնահատել ձեր այնքան գովելի ջանքերը։ Ասոր համար խորհուրդ կու տամ ձեզի՝ զարգանալ, յառաջադիմել, հասնելու համար ձեր գաղափարականին, բայց պահելով միշտ ձեր ինքնութիւնը, մնացեք ինչ-որ եք, մի այլափոխուիք. մենք փափաք չունինք ձեզի մեր մեջ լուծելու։ Դուք ձեր ինքնութիւնը պահելու եք, որպէսզի արժանի ըլլաք ձեր հետապնդած նպատակին։ Այս է մեր այսօրուան ներկայութեան նպատակը, ապա թէ ոչ վարժարանի մը բացումը ինքնին բան մը չէ, եթէ չի ձգտիր այդ բարձր նպատակին։ Ձեր վարժարանը պիտի վայելէ այն միեւնոյն ազատութիւնները, ինչ որ կը վայելէր Լուի-Ֆիլիփ թագաւորին օրով։ Այսինքն կրթական նախարարութիւնը պաշտօն ունի միայն օգնելու եւ պաշտպանելու ձեզ, երբ դուք հարկ տեսնէք անոր օգնութեան եւ պաշտպանութեան»[16]։

1939 թ., ուսումնական տարին ավարտելուց հետո, վարժարանի տեսչությունը և ուսուցիչները մեկնում են Իտալիա՝ ամառային արձակուրդներն անցկացնելու։ Այդ ընթացքում գերմանական բանակը հարձակվում է Ֆրանսիայի մայրաքաղաքի վրա։ Ռմբակոծության է ենթարկվում նաև վարժա-

15 Մուրատեան վարժարան, էջ 44։

16 Նույն տեղում, էջ 45։

բանը։ Սակայն Գուրգեն և Կարպիս Ալեմշահ եղբայրների նախաձեռնությամբ վարժարանը չի գրավվում։

1945 թ. միաքանությունը վերադառնում է Փարիզ և սկսում Մուրատյան վարժարանի աշխատանքները։ Ստեղծվում է օժանդակող հանձնախումբ, դրամ է հավաքվում, կատարվում են շենքի վերանորոգման աշխատանքներ, և վերականգնվում է վարժարանի նախկին կյանքը։ 1946 թ. վաթսունվեց աշակերտներով սկսվում է վարժարանի ուսումնական տարին։ Եվ մինչև օրս, հաղթահարելով բազմաթիվ դժվարություններ, կատարելով մեծ զոհողություններ՝ հանուն իրենց նվիրական գաղափարի, վարժարանի հին ու նոր սերունդը աննկարագրելի արիությամբ պահպանում է այդ շահը, որը օգտակար եղավ ոչ միայն ֆրանսահայությանը, այլև Եվրոպայի և Արևելքի շատ երկրների հայ պատանիների համար։

Վարժարանի կրթական մակարդակը հավասար է ֆրանսիական զույգ վկայականներ տվող ուսումնական հաստատությունների մակարդակին։ Կրթության հետ զուգահեռ, վարժարանի ուսուցիչների նպատակն է հայ պատանիների մեջ պահել մեր դարավոր սովորություններն ու ազգային պատմության հերոսական ոգին, ուսուցանել մայրենի լեզուն, որպեսզի նրա օգնությամբ հայ երեխաները կարողանան շփում ունենալ ազգային մշակույթին և ավանդույթներին։

Վերջին տարիներին վարժարանի աշակերտների թիվը 130-ից չի անցնում և գնալով նվազում է։ Փարիզի 70 հազար հայության համար այս թիվը շատ քիչ է, անհանգստացնող։ Ինչպես վկայում է «Հառաջ» թերթը, անցել են այս կրթական օջախի երանելի տարիները և եկել են մտահոգվելու ժամանակները[17]։ Չնայած դրան, վարժարանը սերտ կապերի մեջ է մայր հայրենիքի հետ։ Հայաստանից ամեն տարի ուղարկվում են դասագրքեր, գեղարվեստական գրականություն, թերթեր, ամսագրեր, լուսանկարներ, ձայնագրություններ, բայց դարձյալ համապատասխան ազգային գործունեություն չի ծավալվում դպրոցի պահպանության, մայրենի լեզվի ուսուցման ուղղությամբ։ Թեպետ վերջին շրջանում նկատվում է երիտասարդների վերադարձը դեպի ազգային ակունքները, մեծանում հետաքրքրությունը մշակութային արժեքների և պատմության հանդեպ, բայց, այնուամենայնիվ, չպետք է մոռանալ, որ ազգի գոյատևման առաջին պայմանը մայրենի լեզվի և դպրոցի պահպանումն է։

Սամուել Մուրատյան վարժարանի ինչպես նախակրթարանի, այնպես էլ միջնակարգի համար հայոց լեզվի և պատմության ուսուցմանը շաբաթական հատկացված է հինգ ժամ։ Ճիշտ է, ժամերը քիչ են, բայց երեխաները հասցնում են ծանոթանալ մայրենի գրականությանն ու ժողովրդի պատմությանը։

Այս վարժարանում են սովորել հայ նշանավոր արվեստագետների՝ Շառլ Ազնավուրի, Հանրի Վերնոյի (Աշոտ Մալաքյան), Ռոզի Արմենի և ուրիշների երեխաները։ Ազգային զգացումները միշտ արթուն պահելու նպատակով հայ արվեստագետները հաճախ են լինում վարժարանում, աշակերտների համար կազմակերպում դասախոսություններ, համերգներ։ Սփյուռքում հայկական դպրոց, վարժարան, ուսումնական կամ գիտական որևէ կենտրոն պահելը գերմարդկային ճիգեր է պահանջում։ Միջոցներ հայթայթել, շենք կառուցել, հոգալ ուսուցիչների ամսաթոշակները, վճարել պետական տուրքերը՝ մեծ գումարներ են պահանջում։ Այլ հարակից ծախսեր՝ ջուր, լույս, ջեռուցում. այս ամենը երբեմն ջլատում են կրթական գործի նվիրյալների ուժերը։

«Սփյուռքահայ ուսուցչի կոչումը ռազմիկի կոչումին պես բան մըն է այսօր։ Իր հայրենիքին համար կռվող զինվորը բնավ վարձատրության մասին չէ հոգալ։ Մենք ալ կփորձենք ատանկ վարվիլ»[18],—վարժարանի տնօրեն հայր Վարդան Քեշիշյանի այս խոսքերը համոզիչ են դառնում նրա երեք տասնյակ տարիների ուսուցչական տքնաջան գործունեությամբ։

---

17 «Հառաջ», 14—15. V. 1988։

18 Սովետական Հայաստան, 1988, № 2, էջ 9։

Չնայած եղած դժվարություններին, վարժարանը հիմա ևս շարունակում է իր ավելի քան 150 տարիների լավագույն ավանդույթները։

САМУЭЛ МУРАТЯН И КОЛЛЕДЖ ЕГО ИМЕНИ

Р. Г. ДАВТЯН

Резюме

Самуэл Муратян — один из известных деятелей армянской культуры XVIII в. Вначале он получил образование в армянской Мхитарянской школе в Венгрии, а впоследствии—в Венеции. Затем он отправляется в Индию и занимается торговлей.

Кроме материального благополучия школы его волнует проблема обучения и воспитания армянских детей. Он осознает необходимость создания армянской школы. Глубокое впечатление производит на него патриотическая деятельность мхитарянцев, и он предоставляет крупную сумму для создания в центре Европы очага просвещения. Однако при жизни мечта Самуэла Муратяна не осуществилась. В 1834 г. в Падуе (Италия) была создана школа Самуэла Муратяна, которая стала очагом армянского просвещения. В 1846 г. школу Муратяна переводят в Париж. В 1870 г. из-за франко-прусской войны ученики были переведены в Рафаэлянскую школу в Венеции. 23 декабря 1928 г. в Париже, после 60-летнего перерыва, снова распахнула двери школа Самуэла Муратяна, которая действует и поныне. В ней обучается 130 учеников. Проводится большая работа по изучению и сохранению родного языка, вековых традиций и национальной истории.

SAMUEL MURADIAN AND THE COLLEGE BY HIS NAME

R. G. DAVTIAN

Summary

Samuel Muradian is one of the well-known figures of Armenian culture of the XVIII c. At the beginning he got education in Armenian Mkhitarian school in Hungary and then—in Venice. Then he leaves for India and is busy with trade.

Besides the material well-being of the school, the problem of teaching and education of Armenian children worries him. He admits the necessity of the creation of Armenian school. Patriotic activity of Mkhitarians made a deep impression on him and he gives them a great summ for opening a hearth of education in the centre of Europe. However during his life Samuel Muradian's dream didn't come true. In 1834 in Padua (Italy) Samuel Muradian's school was created, which became the hearth of Armenian education. In 1846 Muradian's school was transferred to Paris. In 1870 because of the French-Prussian war the pupils were transferred to Rafaelian school in Venice. On the 23d of December of 1928 in Paris, after 60 years' break Samuel Muradian's school again opened its doors, which is functioning up to nowadays. 130 pupils study there. For studying and maintaining native language, Armenian secular traditions and national history, a great work is being done.